## 37. ՍԱՓՈՒՐ-ՍԱՓՈՒՐ ԽՐՑԻԿ

Կէղի, չէղի իրիկ ու կնիկ մի կէղին, ուրանց ախչիկ մի կեղի։ Ըդ ախչիկն ա կթրպռոշնա կփեթնա, կառի փարչ, կէրթա ճրու։ Կոխ (դանգ) մի ճրու միջից գելի, կեսա.

— Ախչիկ, դառք մի կա քըզի գալու։

Ախչիկ գիլա ու գիլա, դառտակ գելի ու գիգա։ Օր մի չէ, էրկու հ՚ըմեն օր կոխ հըմալ կեսա։ Ախչիկ կխալի, կմաշի։

Մամ ու պապ կխարցուն, կեսին.— Ախչիկ, դու հ՚ո՞րի հըմալ կխալիս, կմաշիս։

Կեսա.— Մարե, ես կէրթամ ճրու, կոխ մի գելի ճրու էրես, կեսա. «Ախչիկ, քըզի դառք մի կա գալու»։

Մամ ու պապ կսովրցուն, կեսին. «Ասա, ճոչո՞ւտ, թե՞ փոքրուտ»։

Ախչիկ կէրթա ճրու, կոխ գելի հ՚առեջ, էլման կեսա.

— Ախչիկ, դառք մի կա քըզի գալու։

Ախչիկ լէ կեսա.— Ճոչո՞ւտ ա, չէ՞ փոքրուտ։

Էն լէ կեսա.— Փոքրուտ լավ ա քընց ճոչուտ։

Ախչիկ գելի գիգա տուն։ Մամն ու պապ գելի էդ կոխու դարտե կառին դախչիկ ու կկուրիսին։ Գելին կէրթան շատ հեռուն ճամբախ, բաղնի մի ռաստ գիգան։ Կէրթան չորս բոլոր կզվռնին, դուռ չկա։ Կեսին. «Վա՜յ, վա՜յ մացինք դուրս»։

Ախչիկ ծեռ կիտա պատ, դուռ մի կբացվի ուրին, ինք կէրթա ներս, դուռ գիգա հ՚իրար։ Մամն ու պապ ինչ քեշիտ կէնին, զուրանք կսպանին, էդ դուռ չբացվի։ Մամն ու պապ կեսին թը՝ «Իգա դառք էդ էր գալու»։ Գելին կէրթան, ախչիկ կմնա օդի։



22—1086

Ախչիկն ա դելի էղ բաղնի մեջ, կօլորտի, կիչքա մեկ քսան հ'օդա կա էնտեխ։ Կէրթա ծիանոց, մե հարիր ծի կա մեջ կապուկ։ Կէրթա հ'օդե մի լիք օչխար ա, կէրթա հ'օդե մի լիք տավար ա։ Հ'օդե մի կէրթա լիքն էծ ին, հ'օդե մի կէրթա լիք գել ա, մեկ կէրթա օր լիք վերի օչխար ա, բռներ ին կյադի, մեկն լիք էղվնիկ ին, մեկ լիք ճնճղուկ, սարեկ ին։ Գելի վերին հ'օդեն կաչկա օր մեռել մի օդա պառկուկ ա։ Կբանա, կաչկա օր էդի մեռել ա։ Կնստի իրեք չորս ամիս իդա մեռլի ճանճեր կքշա ուր դաստմալով։ Մեկ օր մի բաղնի տակ իսնի ծեն դիգա, գլոխ կթալա փանջարից, օր բոշի մի քոչ դրե էդ բաղնի տակ։

Բոշի դրռին կեսա.— Առ քրդի քսան օսկի փարա, քու գյաճկեն տուր ընձի բեսլամա։

Օսկին կիտա բոշի դրռին, գյաճկեն կբռնի կբերա ուրին։ Կնստի, ուր էութեն էդ դյաճկին խսա կենա, ու կեսա.

— Գյաճկա, դաստմալ առ, ըդա մեռլի ճանճեր քշա, ես իդա չորս ամիս մեռա նստելով։ Ես հ'ելիմ դուս, իգամ։

Ախչիկ կէրթա դուրս, էդ մեռել կսախնա։ Էդ բոշի գյաճկեն էդ մեռլին կեսա.— Աստված քու տուն ավիրա, ես մեռա էդա չորս ամիս քու ճանճեր քշելով։

Տղեն կեսա.— Օր թը իդա չորս ամիս ընձի պախեր ես, դու ընձիկ, ես քըզիկ։

Կփաթվին իրար, կդրկվին, կուրբխնան։ Ըդ ախչիկ դրսեն դիգա։ Ախչիկ կշիվարի, կկանի։ Տղեն կեսա բոշի գյաճկին.

— Իդա ի՞նչ ա։

Կեսա.— Իդա իմ բարդաստին ա (ծառա)։

Ախչիկ կշիվարի, կկանի, ծեն չխանա։

Էդ մարդ գելի կէրթա քաղքներ, կօլորդի, ուրին ալիշվերիշութեն կէնա, ուրին շատ կղովլաթանա, կզանդինանա, գիգա ուր տուն կհանդիպի։

Էրկու օր կմնա տան մեջ, մարդ բոշի գյաճկին կեսա.

— Կնիկ, էրթամ բազար։

Կեսա.— Դե դնա, ընձի հըմալ ձեռք մի շոր բերիս, փաթըթիս պլուլիս օր էրթա դրզի գյարճի մեջ (ընկույզի կճեպներու մեջ)։

Կեսա.— Խարցու սանք, ի՞նչ բերիմ քու բարդաստին։

Բոշի գյաճկեն ախչկան կեսա.— Բարդաստի, քըզի ի՞նչ բերա։

Կեսա.— Ընձի բան լէ թ՚չբերա, Սափուր-սափուր խրցիկ մի

ընձի բերա, թե օր չբերա լէ, օր քաղքեն հ՚ելավ, ուր ծիու օտներ քար դառնա։

Էդ մարդ կխեծի ուր ծին, կէրթա քաղաք, բազար ուր կնկա բազար կենա, կմոռնա զէդ բարդաստի խրցիկ։ Գելի գիգա քաղքից դուրս, կես ճամբախ ծիու օտներ կդառնա քար։ Մարդ կշիվարի, կեսա. «Հ՚որի՞ իմ ծիու օտներ դարձավ քարդ։ Կմեղա, կմտածա, կեսա. «Բարդաստու խրցիկն իմ մոռցեր իմդ։ Կդառնա, կէրթա, կէրթա քաղքին մեջ։

Սալախ կէնի դուքներ, կեսա.— Գյալո՛, Սափուր-սափուր խրցիկ դո՞ր կա։

Դոր կէրթա, Սափուր-սափուր խրցիկ չգտնա։ Կէրթա մե դուքան մե քաղքից դուրս ա, կեսա.

— Գյալո, Սափուր-սափուր խրցիկ չկա՞ օդի։

Կեսա.— Կան օդա, տղա, կտանիս վի՞ն։

Կեսա.— Կտանիմ իմ բարդաստուն։

Կեսա.— Տղա՛, էդի դարդլու ա, օր ղէաի ուզած ատոր կտանիս, մուղաթ կենաս իդրա տիրոջ։

Կառի զէդ Սափուր-սափուր խրցիկ ու գիգա։ Գիգա տուն, ծիուց գիշնի, զծին կնիկ կքաշա ներս։ Կբերա զշորեր կիտա կնիկ, Սափուր-սափուր խրցիկ լէ կիտա բարդաստին։

Բարդաստին կառի զՍափուր-սափուր խրցիկ ու կքաշվի թահնա հ՚օդե մի։ Տղեն լէ կէրթա կպաղտվի հ՚օդի դռան հ՚ետև։

Ախչիկ կնստի ուր դարդեր Սափուր-սափուր խրցկան քսա կէնա, կեսա.

— Սափուր-սափուր խրցիկ, ես ելա գացի ճրու, կոխմ ելավ իմ հ՚առեճ, ըսեց. «Ախչիկ, դառք մը կա քըզի գալուդ, ես լացի ու էկա տուն, Սափուր-սափուր խրցիկ, ես պատռի՞մ, չէ դու։

Տղեն օր պաղտվուկ էր դռան ետև, կեսա,— Ե՛ս։

Ախչիկն լէ կգինա, թը Սափուր-սափուր խրցիկն էր։

Ախչիկ կեսա.— Սափուր-սափուր խրցիկ, ես գացի ճուր էլման կոխ էլման հ՚ելավ իմ հ՚առեճ, էլման ըսեց. «Ախչիկ, քըզի դառք մի կա գալուդ. ես խալա ու մաշա,— կեսա,— Սափուր-սափուր խրցիկ, ես պատռի՞մ, չէ դու։

Տղեն լէ կեսա.— Ես։

Կեսա.— Սափուր-սափուր խրցիկ, իմ պապ ու մամ ընձնե խարցուցին, ըսին. «Դու հ՚որի՞ էդմլա խալիր ես ու մաշիր իսդ. ես լէ ըսի. «Կոխ մի գելի իմ հ՚առեճ ես օր կէրթամ ճրուդ։ Իմ մամ ու պապ ընձի սովրցուն օր թե ես ասիմ՝ ճոչուց գիգա, թը

փոքրուտ։ Կոխ լէ ըսեց. «Փոքրուց լավ ա քընց ճոչուց։ — Կեսա,— Սափուր-սափուր խրցիկ, ես պատոի՞մ, չէ դու։

Տղեն կեսա.— Ես։

Կեսա.— Սափուր-սափուր խրցիկ, ախպրրից ես էկա տուն, իմ պապուն ըսեցի, թը կեսա ճոչուց լավ ա, խընց փոքրուց։ Իմ պապ ու մամ առան ղիս, գացին։ — Կեսա,— Սափուր-սափուր խրցիկ, ես պատոի՞մ, չէ դու։

Տղեն կեսա.— Ե՛ս։

Կեսա.— Հ'ելանք էկանք բաղնի մի ռաստ էկանք, օլորտանք բոլոր, գուռ չկեր, ես ծեռ տվի գուռ, գուռ բացվավ, ես գացի ներս, դուռ դրվավ, ես լացի դիդա, իմ պապ ու մամ լէ դսուց լացին, Սափուր-սափուր խրցիկ, ես պատոի՞մ, չէ դու։

Տղեն կեսա.— Ես։

Կեսա.— Իմ պապ ու մամ թողին գացին, ես ընկա իդա հ'օդեք օլորտա, տաս ու քսան հ'օդա էր, մեկ մաքի էր, դել էր, մեկ էծ էր, մեկ ծի, մեկ վերի օչխար էր, մեկ էղվնիկ էր, մեկ ճընճուղ էր, սարեկ էր. Սափուր-սափուր խրցիկ, ես պատոի՞մ, չէ դու։

Տղեն կեսա.— Ես։

Կեսա.— Սափուր-սափուր խրցիկ, ես հ'ելա վերին հ'օդեն, տեսա մեկ մի էնտեխ պառկուկ էր, բանամ աչքիմ՝ մեռել էր։ Սափուր-սափուր խրցիկ, ես պատոի՞մ, չէ դու։

Ախչիկ ուր դարդեր օր կեսեր, Սափուր-սափուր կը լցվի, կուռի։

Տղեն կեսա.— Ես։

Կեսա,— Սափուր-սափուր խրցիկ, նստա չորս ամիս ըդրա ճանճեր քշեցի, զէդի պախեցի։ Օր մի հ'իսնի ծէն էկավ բաղնի՝ տակ, գլուխս փանջարից թալի դուրս, աչքի օր բոշի մի քոշ էր, Սափուր-սափուր խրցիկ, ե՞ս պատոիմ, չէ դու։

Տղեն լէ կեսա.— Ե՛ս։

Կեսա.— Բոշի դռկին ըսեցի, գյաճկեն տուր ընձի, հ'ելա քսան օսկի տվեցի, ղառա զէդ գյաճկեն, էկա։ Բերեցի, իմ էութեն ընդրան քսա էրեցի, սրտեն սաղ էինք։ Դաստմալ տվի ձեռք, ըսի՝ ըդ մեռլի ճանճեր քշա, հարի ես հ'իգամ. իդա չորս ամիս ես մեռա նստելով, Սափուր-սափուր խրցիկ, ե՞ս պատոիմ, չէ դու։

Տղեն կեսա.— Ե՛ս։

Սափուր-սափուր խրցիկ կուռի։

— Սափուր-սափուր խրցիկ,— կեսա,— ես գացի դուրս, ըսի

փըշը մի օլորտիմ, բենս բացվի, հ'իգամ, Սափուր-սափուր խրցիկ, ես պատռի՞մ, չէ դու։

Տղեն կեսա.— Ես։

— Սափուր-սափուր խրցիկ,— կեսա.— Ես էկա տեսի օր էն մեռել սախցեր ա, էն բոշի գյաճկեն, փաթված իրար, գըրկված հ'իրար ու նստած ին. Սափուր-սափուր խրցիկ, ես պատռի՞մ, չէ դու։ — Սափուր-սափուր խրցիկ կուռի, կլցվի։

Տղեն կեսա.— Ես։

Կեսա.— Էս մեռել հ'ելավ գնաց քսղքներ, ուրին թուշրուվեն էրից, փել մի ժուք ու ժամանակ մի մնաց, հ'ելավ էկավ ուր տուն, ըսեց. «Կնիկ, ես կէրթամ բազար». ըսեց՝ «Դե գնա,— ըսեց— ընձի հըմար շոր բերիս օր պըլուլիս էցքիս գըզան գյարճ։ Բոշի գյաճկին ընդրա իրիկ ըսեց. «Խարցու սանք, բարդաստին ի՞նչ կուզա»։ Էկավ ընձի ըսեց. «Ի՞նչ քըզի բերա», ես լէ ըսի. «Թընձի բան մե չբերա, մեկ Սափուր-սափուր խրցիկ բերա, օր չբերա, ուր ծիու օտներ քար դառնա»։ Սափուր-սափուր խրցիկ, ե՞ս պատռիմ, չէ դու։

Սափուր-սափուր խրցիկ կուռի, կէղի թաչկելու։

Տղեն կեսա.— Ես։

Մարդ գնաց քաղաք բազար, ուր կնկան շոր բազրեց, ընձի խրցիկ մոռցավ։ Քաղքից դուրս էկավ, ուր ծիու օտներ քար դարձավ, ըսեց. «Ի՞նչ մոռցեր իմ,— մեղեց, ըսեց,— վոլլա, բարդաստի Սափուր-սափուր խրցիկ մոռցեր իմ»։ Սափուր-սափուր խրցիկ, ե՞ս պատռիմ, չէ դու։

Տղեն կեսա.— Ես։

Կեսա.— Մարդն դարձավ, գնաց դուքըններ օլորտավ, ըսին. «Սափուր-սափուր խրցիկ չկա, Սափուր-սափուր խրցիկ մեկ քաղքեն դուս գուքնի մե մեշ կա». Գնաց էն դուքան, բարիշավ, ըսին. «Դարդլի մարդ զէդի կուղա, չթորկիս թոթխար, իդրա ուզող կպատռի, դու էրթաս կանիս տալդա տեխ, ընդրա ուզող, Սափուր-սափուր խրցիկ կղնա ուր հ'առեճ, ուր դարդեր մեկու մեկու խսա կենա, կդառնա կեսա՝ «Սափուր-սափուր խրցիկ, ե՞ս պատռիմ, չէ դուն», դուն լէ պըտի ըսիս՝ ես. օր դու չասիս ես, էդ ախչիկ կպատռի տեղուց տեխ։ Օր թը ըսիս, Սափուր-սափուր խրցիկն կպատռի։ Էդ մարդ կառի զէղ Սափուր-սափուր խրցիկ ու գիգա։ Առավ էկավ ուր կնկա շորեր տվեց ուր կնիկ, իմ խրցիկ լէ ավեց հ'իս, Սափուր-սափուր խրցիկ, զքըզի առա ու էկա, նստա օդա,

քըղի դրի իմ հ՚առեճ ու իմ դարդեր մեկու մեկու քըղի պատմեցի. Սափուր-սափուր խրցիկ, ե՞ս պատռիմ, չէ դու։

Սափուր-սափուր խրցիկ ուռուկ էր, եփ իտոր ախչիկ կեսա՝ «Ես պատռիմ, չէ դուս, Սափուր-սափուր խրցիկ կթախկի, կէղի խազար կտոր։

Իդա հախս տղեն դռան հ՚ետևեն կթռի դուրս, կեսա.

— Ախչիկ, քու դլխուն արևուն մեռնիմ, ես չգինինք օր թը դուն էր, դինենք թե բոշի դյաճկեն էր ընձի պախեր էր, ընձի մեխք չկա, էնիկ լեզվով թարիֆ էնեց, դու լէ ծեն չէնեցիր։

Ախչիկ լէ կեսա.— Ես ի՞նչ ծեն էնենք։

Տղեն կպաքա ախչկա ճակատ, կեսա.— Ես քզիկ, դու ընձիկ։

Գելին յոթ տարվա խամ ճորին, էգ բոշի դյաճկի ծամեր կկապա, ճորուն կեսա.— Տանիս սար զարդիս, ծոր զարդիս, հ՚իրիկուն ըդրա ծամեր ավադ ծով թաթխիս բերիս։

Ճորին կտանի սար կզարդա, ծոր կզարդա, հ՚իրիկուն ավագ ծով ընդրա ծամ կթաթխա կբերա։

Տղեն գելի նոր յոթն օր, յոթ գիշեր գոլ ու քուսան կզարդա, զուր խարսնիք կէնա։

Ընդոնք խասան ուրանց մուրաղին, դու լէ խասնիս քու մուրաղին։

Երկնուց իրեք խնձոր իշավ. մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ անդանջ էնողին։